Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի մայիսի 13-ից 23-ը Ռուսաստանի Դաշնությունում տեղակայված (Մոսկվա))՝ ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարության 01.04.2023թ մինչև 31.03.2025թ ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման արդյունքների վերաբերյալ

1. ***Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.***

Գագիկ Քոսակյան, ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության ֆինանսաբյուջետային վերահսկողության 1-ին բաժնի գլխավոր վերահսկող

2. ***Գործուղման վայրը և ժամկետները.***

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2025թ մայիսի 12-ից մինչև 23-ը

3. ***Գործուղման նպատակը.***

Մոսկվայում տեղակայված՝ ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարության 01.04.2023թ մինչև 31.03.2025թ ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգում

Հրավիրող կողմը.

4. ***Քննարկված թեմաները.***

ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարությունում ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումն իրականացվել է 2025թ մարտի 21-ի ԱՊՀ գլխավոր քարտուղարի տեղակալ Դ.Ա. Տրեֆիլովի «ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի

քարտուղարությունում ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումն իրականացնելու մասին» թիվ 25 հրամանի, ԱՊՀ անդամ պետությունների կողմից ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգում իրականացնելու 2025-2026թթ. ժամանակացույցի, ինչպես նաև 2003թ հունիսի 27-ի ԱՊՀ Տնտեսական խորհրդի որոշմամբ հաստատված ԱՊՀ անդամ պետությունների միասնական բյուջեից ֆինանսավորվող Համագործակցության անդամ պետությունների ֆինանսական և տնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման կանոնակարգի համաձայն:

2025 թվականի մայիսի 13-ից մինչև 23-ը Մոսկվայում տեղակայված ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարությունում 01.04.23թ մինչև 31.03.25թ ժամանակաշրջանի ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ստուգման շրջանակներում ղեկավարման և համակարգման աշխատանքներն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության ներկայացուցչի կողմից: Ստուգումների ընթացքում առաջադրված ընդհանուր հարցերից իմ կողմից, որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ, կատարվել է.

1. Ստուգվող ժամանակաշրջանում գործուղման և տնտեսական այլ գործունեության նպատակով աշխատակիցներին առհաշիվ տրամադրված գումարների հաշվարկների ճշտության ստուգում,

-դրանց արտացոլումը հաշվապահական հաշվառման փաստաթղթերում և հաշվետվություններում, փաստացի ծախսերի համապատասխանությունը բյուջեով հաստատված հատկացումներին:

Վերը նշված հարցի շրջանակներում էական խախտումներ և անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

6. ***Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.***

ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի քարտուղարությունում ֆինանսատնտեսական գործունեության փաստաթղթային ստուգման արդյունքներով 2025թ մայիսի 23-ին կազմվել և ստորագրվել է համապատասխան ստուգման ակտ, որը ԱՊՀ Գործադիր Կոմիտեի կողմից սահմանված կարգով կներկայացվի Հայաստանի Հանրապետությանը:

7. ***Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.***

8. ***Ստորագրությունը, ամսաթիվը.***

27.05.2025թ